

ԷՔԵՐԸՏԻ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

Մայն դեկտեմբերի համարով Արարատ ամսագիրը ընտրում է իւր երեսուն եւ եօթներորդ տարին եւ սկսում երեսուն եւ ութներորդը: Երեսուն եւ ութ տարին միանգամայն պատկառելի եւ չափահաս հասակ է մեզանում ամսագրի համար եւ Արարատը ուսումնայոց միակ երկարակեաց ամսագիրն է շնորհիւ իւր քաջատիկ ղեկի եւ հանգամանքների:

Նա թէ եւ որոշ չափով ծառայել է հայրենի եկեղեցուն եւ դպրութեան, գրականութեան եւ գիտութեան, թէ եւ շօշափել է քաղմասիւ խնդիրներ, քսցց ցաւօք սրտի սէտք է խոստովանենք, որ ցանկալի չափով քաւականութիւն չի տուել հայ եկեղեցականի եւ աշխարհականի հոգեկան ժամանակակից պահանջներին, մնացել է վախ եւ քաւականացել պաշտօնական գիտական բաժնով առանց ճշգրիտ հայելի լինելու մեր եկեղեցու կեանքում՝ ժողովրդի եւ քահանայական շրջանի մէջ արծարծուող խնդիրների:

Այդ բանին կարծէք արգելք է եղել այն հանդամանքը, որ Արարատը լինելով Հայրապետական օրգան, չի ունեցել ազատ քաժին առօրեայ կրօնական քարոյական խնդիրների մասին ծագած հարցերը լուսաբանելու եւ մշակելու:

Մի երկրորդ պատճառ Արարատի անբաւարար կացութեան եղել է այն հանգամանքը, որ աշխատակիցների շատ սահմանափակ շրջան է ունեցել եւ այն ազգասիրաբար, ուստի եւ յաճախ գուրկ է եղել նիւթերի խիտ ընտրութիւն անելու հնարաւորութիւնից:

Երրորդ արգելքը սէտք է համարել մեր գործակալների, հոգեւոր կառավարութիւնների եւ կոնսիստորիայի պաշտօնեաների անփոյթ վերաբերմունքը դէպի Արարատի քաժանորդները, որոնցից շատ շատերը զանգատուում են, որ իրենց համարներ չեն ուղարկում, միւսները թէ՛ ուշ են ստանում եւ երրորդները՝ մանաւանդ գործակալներից, որոնք, եթէ իրենց

մասին թելթի համարում տպուած է որեւէ անախորժ պաշտօնական կաղաղորութիւն, այդ համարները քաժանորդներին չեն ուղարկում, որպէս զի իրենց մերձաւոր իշխանաւորի այս կամ այն գործը ստորադրեալներին յայտնի չը լինի. (այսպիսի դէպքեր տեղի ունեցան այս տարի): Ռըչափ մեծ էր մեր զարմանքը, երբ այս տարուայ ժողոտոսի համարը, որ լոյս էր տեսել նոյն ամսի 15-ից ոչ ուշ, յանկարծ Դարալագեազի եւ Շարուրի քաժանորդները ստացան հոկտեմբերի 15-ին: Որպէս զի այդ անախորժութեանց առաջն առնուի, յատկապէս խնդրում ենք յարգելի քաժանորդներէց, որ օր առաջ յայտնեն իրենց հասցէները, որպէս զի միանգամ ընդ միշտ աշխատենք վերջացնել գործակալների միջոցով քաժանորդներին համարներ ուղարկելու սովորութիւնը որանդ միայն հնարաւոր է: Գալով աշխատակիցներին, խմբագրութիւնս պարտք է համարում յայտնել, որ տպագրութեան արժանի դատուած եւ համարում լոյս տեսած թարգմանական եւ ինքնուրոյն յօդուածներից կըտրուի արտատպութիւն 50 օրինակ, դրանից աւելին համար կպահանջուի մի միայն թղթի գինը եւ եթէ վանքի նիւթականը հնարաւորութիւն տուաւ եւ Արարատի ազատ քաժանորդների թիւն աւելացաւ, կաշխատուի նաեւ դրամական որոշ վարձատրութիւն տալ աշխատակիցներին:

Վեհափառ Հայրապետի հրամանով քանալով նաեւ առանձին քաժին եկեղեցու վերաբերեալ ըղծացիկ խնդիրների առթիւ ստացուած թղթակցութիւնների եւ հայ ժողովրդի մէջ մնացած քրիստոնէական համայնական սկզբունքների ուսումնասիրութեան համար այլ եւ այլ զաւառներում, յոյս ունինք, որ քաւականին քազմակողմանի նիւթ կունենանք մեր ժողովրդի կրօնական զգացման անցեալ եւ ներկայ կացութեան եւ պահանջների սասին, առանց որոց անհնարին է քաւարարութիւն տալ այդ պահանջներին: Կան նաեւ մի շարք հասունացած խնդիրներ, որոնք հակառակ մեր այս կամ այն տրամադրութեան, իրենց լուծումն են պահանջում եւ միայն կարելոր է ժողովրդի եւ հոգեւորականութեան տրամադրութեան արտայայտութիւնը,

որպէս զի ըստ այնմ լուծումն ստանան այդ խնդիրները եւ դադարեն դամոկլեան սրի նման մեր զլիւն կախուած լինելուց: Անշուշտ չը պէտք է մոռանալ, որ Արարատի յաջողութիւնը ինչպէս եւ այդ խնդիրների լուծումը կախուած է աշխատակիցների թուից ու եռանդից, եւ մենք յոյս ունինք, որ մեր հողեւոր դպրոցների ուսուցչական խմբերն ու հոգեւորականները արձագանք կը տան խմբագրութեանս հրաւերին եւ կաշխատեն իրենց զրական աշխատանքով աջակցել իրենց չափահաս կրօնական — զրական ամսաթերթին, մանաւանդ որ մեր ամսագրերի թիւը ուղղակի ողբալի է, իսկ ընթերցողներինը՝ աննշան:



ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԵՒ ՄԵՐ ՈՂՈՐՄԱԾՈՒԹԻՒՆԸ

Նրանի ողորմածաց, զի չօքա ողորմութիւն գտցին:

Աւետ. Մասթեսի զլ. Ե. 7—8:

Զգեցարուք այսուհետեւ իբրեւ ընտրեալք Աստուծոյ՝ սուրբք և սիրեցեալք, զգուծ, զողորմութիւն, զքաղցրութիւն, զխոնարհութիւն, զհեզութիւն, զերկայնամտութիւն, ներկէ միմեանց, չնորհել իրերաց, եթէ ուրուք զումեքէ տրտունջ ինչ իցէ, որպէս Աստուած Քրիստոսիւ չնորհաց ձեզ, նոյնպէս և զուք:

Կողոսացւոց ք. զլ. գ. 12:

ՍԻՐՈՅ արտայայտութեան ամենագլխաւոր ապացոյցներից մինը, ինչպէս գիտենք, գոյքի մասնագրութիւնն է երբ բոլորովին կարիք չկայ անձնագոհութեան: Մենք մէկի ունեցած սէրը դէպի ընտանիքը, դէպի իւր զաւակներն ու մերձաւորները ժամանակակից հասկացողութեամբ